ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԼՈՒՅՍ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ԽԱԺԱԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Խաժակյան,

Ի պատասխան Ձեր 19.10.2021թ. հ.Լ-01/42 գրության, Անահիտ Երջանիկի Գրիգորյանին տարածք հատկացնելու հարցի վերաբերյալ, տեղեկացվում է.

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը կարող է տրամադրվել անհատույց օգտագործման կամ անհատույց օտարվել կամ փոխանակվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ.315-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 4-րդ կետի և 41-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթների: Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերն օտարվում կամ վարձակալության են տրամադրվում գույքի օգտագործման տրամադրման և օտարման ամենամյա ծրագրին համապատասխան, որը սահմանում է նաև գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները: Նշված ծրագրի համաձայն՝ համայնքային սեփականություն հանդիսացող գույքը տրամադրվում է աճուրդով կամ մրցույթով Երևանի քաղաքապետարանում գործող Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման աճուրդը և մրցույթը կազմակերպող ու անցկացնող հանձնաժողովի միջոցով: Սահմանված կարգով տրամադրման ենթակա տարածքների վարձակալության կամ օտարման մրցույթների և աճուրդների կազմակերպման նպատակով համապատասխան հայտարարություններ տեղակայվում են www.yerevan.am կայքում և մամուլում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ